ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԺՈՐԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ք. Արարատ, Շահումյան 62
Հեռ. (0234) 4-23-82
Email: ararat1nor@schools.am

ք.Արարատ 04 . 12.2023թ

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ԻՆ

ք. Երևան, Ռոստոմի 58
էլ. հասցեն՝ ms.foton2014@mail.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ -ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 01.08.2023թ. կնքված № ԱՔ1Դ-ԳՀԱՊՁՊ-23/02/2 ծածկագրով «Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով»:

«Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 24.11.2023 թվականին գրավոր ապրանքների մատակարարման պատվերի հայտ է ներկայացրել, որը մնացել է անպատասխան: 01.12.2023թ. նորից՝ վերջնական, ապրանքների մատակարարման պատվերի հայտ է ներկայացրել և ժամանակ տվել մինչև աշխատանքային օրվա ավարտը: Սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել և Ընկերությունը չի կատարել պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ «Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծում է պայմանագիրը **134960 (մեկ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ գումարի չափով: Գումարը հաշվարկված է ըստ հանձնման-ընդունման արձանագրությունների:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը **(20244 (քսան հազար երկու հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ որակավորման ապահովում և 13496 (տասներեք հազար չորս հարյուր ինսունվեց) ՀՀ դրամ պայմանագրի ապահովում)** ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության **900428000252** հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Վ. Մանուկյան